

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍՈՒԹԱՆ

— ԲՈՆՈՍՈՒՐՈԿՈՆ - ԳԻՏՈԿՈՆ - ԲՈՐՈՅՈԿՈՆ —

1927 - 1928

ՀԱՅԱՍՏ

Տ.



Ս. ՀԱՅԱ

1927

ԴԵԿԵMBERԻ

ԹԻՎ 12

ԲԱՆԱԱՒՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԲԱԺԱՆՈՒՄՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ

(շարումակութիւն, տես բազմավէպ 1927, էջ 821)

Դ. — ՅԵՏ ԲԱԺԱՆՄԱՆ

Տեսանց՝ որ յետ արեելեան Հայոց խզման՝ յունական Հայաստանը պահեց իւր միութիւնը կաթողիկէ եկեղեցւոյ հետ, ունենալով իւր առանձին զուտիւը. և թէ պարսկային կողմն ալ մասցին զեռ շատ ցաղկեդոնիկ ազգայինները վլրթանէն քերթողի բռնութիւնը՝ և Արքահամու պատրաստած «մարմաւոր պատուհասը» կըրնային լոեցնել անոնց լեզուն, բայց ոչ ընկճել ողջամիտ դատողութիւնը և փոխել համոզումները, որոնց անշարժ պիտի մասցին, ծնունդ տալով յաճախ նաև ցաղկեդոնական կաթողիկոսաց. Եւ որովհետեւ հարցը չափազանց կարևոր է մեր եկեղ.

պատմութեան համար, պէտք է որ շարունակենք ցննել ցաղկեդոնութեան դերն ի Հայո նաև յետ բաժանման:

1. Խորով Ապրուէզ իւր ԽԻ տարւոյն (614ին) ասպատակելով կայսերութեան գաւառները, զերեց կարնոյ բնակչութիւնը, և ծերունի Յոհան կաթողիկոսն ալ միասին՝ որ այն ժամանակ հոն կը գտնուէր, և զերութեան մէջ ալ վախճանեցաւ 615ին, ինչպէս նոյն տարւոյն մեռաւ նաև Արքահամ, որուն յաջորդեց կոմիտաս (615-628), մասլով սակայն կաթողիկոս «Հայոց մեծաց» կամ պարսկային բաժնին միայն, ինչպէս կը սահմանէ³, ուր յունականը մնաց առանց հայրապետի՝ ժամանակի ցաղաքական պայմաններուն պատճառաւ. Յոհան Մամիկոնեան կ'ուզէ՝ որ կոմիտաս Վրաց խնդրոյն առթիւ Արքահամէ պատուիրակ գնացած լինի անոնց

1. Բ. թ. 291. — 2. Աւու 296. — 3. Գր. բարոց, 218.



ՀԱՅՈ ԱՐՄ. ССР

Digitized by Google

A.R.A.R.®

մօտ ու կոռուփն սատար եղած¹, թայց ես չեմ հաւատար, նկատելով անոր անյիշատակութիւնը կիւրիոնի հետ թղթակցութեանց մէջ՝ միւս գործօն անձանց հնտ, որ նշանակուած են: Հոփիսիմեանց Աճախքն երգող նրբազզած ցնարին հետ չէր միարաներ կոռուպան հոգին: Եւ հայրապետական աթոռին վրայ ևս բռնից հաշտարար քաղաքականութիւն մը:

Խոսրով յետոյ իւր ինչ տարւոյն (617) կործանեց Երուսաղէմը, գերի վարեց անոր Զաքարիա հայրապետը, որոն տեղապահ զրուեցաւ Մողեսոսս երթագափա²: Կոմիտաս առթին օգտուելով, այդ քաղկեդոնիկ աթոռին հետ ուզեց նորոգել խզուած կապը. և ուխտաւորներ զրկեց հոն, որոնց շատ հաճելի եղան տեղապահին, և թղթով մը հասկցուց մեր հայրապետին՝ թէ միսիթարուեր էր այդ ցոյցէն, «յիշեցուցանելով մեզ զառաջին երթեւեկն՝ զոր առնէին ի պատուական տեղիս Երուսաղէմի»: Կոմիտաս քաջալերուած, ինքն ալ պատասխանեց նամակով մը, յիշեցնելով Հայոց ուխտազնացութեան նախկին եռանզը, և անոր զաղացում իւր ազգին վերագրելով: «Իսկ իրեւ զարձոյց, կ'ըսէ, Բարձրեալն զերսս իւր մէնջ, և նայեցաւ ի մեզ խեթի արեգականն, և հետևելով հետսեցան անինք մեր և խովեցար³». ինչ որ յայտնի ակնարկութիւն և զատապարտութիւն է Հայոց անջատան:

Կոմիտասի բաղանցն էր աւելի ընդարձակ յարընչութիւններ ալ հաստատել: Սակայն նկատելով՝ որ Հայոց ու դրացեաց մէջ բացուած անդունդը լեցնել զիւրին չէր, աչքը դարձուց Պարսից տէրութեան հպատակ զատառները, իրեն օժանդակ ունենալով հայ նախարարները, և գլխաւորապէս եռանձունի բազրատունին իմրատ մարզպան Վրկան, որ մեծ ազդեցութիւն ունէր Պարսից արքունաց մէջ: Նոյն 617ին Ասորեստանի կողմերէն ի Դուռին կը հաս-

նին Մար Մարուբայ և Պետրոս եպիսկոպոսներ, որոնց իրենց ուղափառութեան ձեռնարկ մը կու տան հայրապետին, հրատարակութեամբ ալ ծանօթ⁴:

Եթոյ մեր իշխանը «յետ գերութեանն Երուսաղէմի» և Սմբատայ մահէն յառաջ, որ պատահեցաւ Խորովովու իլ տարւոյն⁵ (618), ուստի նոյն 617ին արքային հրամանաւ Պարսից զուրով կը հրափեն՝ ըստ կոմիտասայ կամբիշյու մետրապոլիտ, և Արքուաստայ, Տաճկաց, Հերթայ, Հինուէի, Կոհոնիկորականի, Փարմայ, Մնզրի և Արզոնյ եպիսկոպոսները, «և այլ բազում եպիսկոպոս՝ եպիսկոպոսակցօք և սարկաւազօք և ուխտի սրբոյ եկեղեցոյ», և կը զիմեն կոմիտաս կաթողիկոսին, — Նիրսէն Շինողին ընծայուած աղաւաղ նամակին մէջ «Մամիկոնէց եպիսկոպոս» ներկայացուած՝ թիւրիմացութեամբ թղորոց գրոց⁶, — «ինզրելով ըզհաւատ ըրիստոսասէր Հայոց»: Եւ նա անոնց կը զրէ ընդարձակ վարդապետական թուղթ մը⁷, որ իրը թէ ըննուելով՝ հայ դասանութիւնը լաւագոյն կը դատուի, և արքունի հրամանաւ բոլորը կ'լնդունին զայն, կ'ըսէ ն. Շինողի և Հայոց կողմանէ առ կոստանդին կայսր գրուած յիշեալ թուղթը⁸. և որ աւելի հանդիսական մէ մ'ալ կու տայ տեղեկութեանդ, ըսելով՝ թէ հոն էռն էռ նաև Երուսաղէմի գերեալ Զաքարիա հայրապետը, որ իրը թէ կը միաբանի վկայելու Հայոց հաւատոյն ճշշմարտութեան, և թէ Քաջկեռոնի ժողովն ոչչ է միաբան> նախորդ տիեզերականաց հետ⁹: Բայց ես կը համարիմ՝ թէ կոմիտաս այդ նամակին շարագրողէն կամ խանգարչէն լաւագոյն զիտէր՝ թէ որոց հետ էր գործն. և չի ճանաչեր Զաքարիայի ներկայութիւնն իւր թուած եպիսկոպոսաց մէջ, ինչ որ յայտնի հերցումն է տեղեւկութեանդ, որոն հաւատաց Ոլմանեան¹⁰: Կոմիտասայ բնիկ թղթին մէջ կը կար-

1. Ամփիկ. 8. — 2. Աւր. 103. — 3. Աւր. 181-89. — 4. Արքու. 1896, 536. — 5. Աւր. 189. — 6. Կոյն. 109. — 7. Կոյն. 190. — 8. Գր. բարոց, 218. —

9. Անդ. Աւր. 189. — 10. Գր. բարոց, 212. Բերբ. Արքու. 1896, 531, ամբողջ: — 11. Աւր. 199. — 12. Կոյն. 193. — 13. Արքու. 667.

դանք Փրկչի մասին. «Քաղցեաւ և ծառաւեցաւ՝ ոչ սոսկ մարդկային բնութեամբ, այլ միաւորութեամբ՝ տնօրէնութեան աստուածավայելչարար»¹, ուր ոչ սոսկով կ'ընդունի մարդկային բնութեան տարրերութիւնն աստուածայնէն, բայց մարդկայինին յատուկ ներգործութեան մէջ զնելով Բանին գործակցութիւնն ալ, Դարձեալ կ'ըսէ. «Ոչ սոսկ մարդոյն ասեմ զշարչարանն, զիսաչն և զմանն, և ոչ զնշանագործութիւնն՝ միայնու Բանին Աստուծոյ, այլ միաւորութեամբ տնօրէնութեանն. քանզի Բանին Աստուծոյ մարմացելոյ են ամենայն բարձրագոյնըն և խոնարհազայնըըն»². Ինչ որ Կրկնութիւն է նոյն զաղափարին. Այսինքն բնութեանց երկուութեամբ հանդերձ՝ անոնց գործերը մէկ անձին կը վերազրէ, համաձայն քաղկեդոնական վարդապետութեան։ Եւ իրաւունց ունինց խորհերու՝ թէ Հայրապետու Կրնայ քաղկեդոնիկ լինել, և Թիրոց գրոց միւս տեղերու խանգարիչ ձեռցին վերագրել իւր նամակին այս բացատրութիւնը, թէ նախկին երեք տիեզ. ժողովները ևնովկեցին և արտաքս ընկեցին ի կաթողիկէ առացելական և կեղեցւոյ զՊաւոս սամուտացի և գուռամարն լեռնէ և զդողովն Քաղկեդոնի, զի ասացին երկուու բնութիւնն և երկուու կերպարանն ի Գրիսոսու Յիսուս՝ յետ միաւորութեան տնօրէնութեանն ի սուրբ Կուսէն, որ լինի յայտնապէս երկու անձինը³։ Գիտենք՝ որ 270ին Անտիոքի սիւնողութ զատապարտեց զԱմոսուտացին. բայց ինչպէս կրնային նախկին ժողովները նզովել իրենց անծանօթ ապագայ քաղկեդոնական ժողով մը։ Այս գիտութիւնը կը յարմարի խանգարչի մը, բայց ոչ կոմիտասայ. և որուն հաւատալու համար՝ Տէր Միքելէնի խառնուածըը պէտք էր։ Միակ կեղծիքը չէ այս՝ Երուսաղեմի քաղկեդոնիկ աթոռին հետ հաջոտողին անուանը. Այլ կայ իւր Զրայցըն ալ կոստանդնուպոլսի պատրիարքին հետ⁴, մենամարտ մը Յու-

նաց ոստանին մէջ, թշնամական լեզուով անոնց ու Քաղկեդոնի գէմ, և գիւմաւրապէս ծիսական խողոց շուրջ՝ որ զեռ չկային կոմիտասայ օրերուն. և յորում կը յիշուի Մանազկերտի ժողովն ալ, պատահած իւր մահէն զար մը վերջ, Մէկ խոսքով ամրող զրուածը յերիւրուած է Ստ. Աննեցւոյ առ Յոյնս թղթէն⁵, որոյ հետ համեմատութիւնը զանց կ'ընեմ հու, չծանրաբեռնելու համար գործս։

2. Կոմիտասայ յաջորդին Բ Գրիսոսափորի – որոյ կրոնական գոյնը չննը զիւեր – երկամեայ իշխանութենէն վերջ, հայրապետական աթոռը կը գրաւէ Եզր (630–641), «այր խոնարհ և հեզ⁶», որոյ պաշտօնական հաղորդակցութիւնը Յունաց հետ քաջածանօթ է։ Հաւատարիմ մալով ժամանակակից վկայից հետեւելու մեր կանոնին, մէկ կողմ կը թողում ժ և յաջորդ դարերու մեր պատմչաց նշանակած երկայայու հանգամանքները, և կը շատանամ Եզրի մերձաւոր աղբերաց տեղեւթեամբ։

Հերակի վերջնական յաղթանակով Պարսից զէմ (628ին)⁷ պարսկային Հայաստանի մէկ մասն ալ Յունաց կ'անցնի, և կը Նորոգուին Խոսրովու և Մօրկան հասատած հին սահմանները⁸, Մեր աշխարհի կայսերական գնդին զօրավար կարգուեցաւ հայազգին Եմէժ Գնունի, որ յիշեցուց Եզրի թէ յաւական բաժնին ալ հովուելու համար՝ պէտք էր հրաժարիլ կրնական խորութենէ «և հաղորդել օրինօք (ս. Հաղորդութեամբ) ընդ կայսեր»։ ապա թէ իրեն կը մնար անցնիլ ամփոփուիլ Պարսից կողմը, և մեր «արացուց մեզ այլ կաթուղիկոս»։ Մանր էր հայրապետին հրաժարիլ իւր հօտին մեծ մասէն, և թոյլ տալ աթոռին նոր բաժնում մը։ Որոշեց տեղի տալ, ու խնդրեց կայսերէն «ձեռնարկ հաւատոյ», որ հիմը պիտի կազմէր կրօնական միութեան։ Նըսպատակը պարզապէս զիջանիլ չէր, այւ

1. Գր. բրոց, 218. — 2. Գր. բրոց, 218. — 3. Անգ. 216. — 4. Տե՛ Միքել. 119. — 5. Գր. բրոց,

484. — 6. Անգ. 323. — 7. Սեր. 154. — 8. Կոյն. 158.

Ալջօրէն ու քննութեամբ գործել : Հերակլ փութով զրկեց անոր խնդրածը՝ իւր իսկ ձեռագրով . և անոր մէջ «նզովեալ զնեատոր և զամենայն հերձուածոս, բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղկեդոնի», ըստ մեր պատմչին . ընդ Հակառակն «զժովովն Քաղկեդոնի խոստովանեալ էր և կարգեալ ընդ երիս ժողովն», կ'ըսէ Սիւնեաց եպիսկոպոսը Մաթուսազայ՝ կայսեր պատասխանին մէջ², զոր շարադրեց կաթողիկոսին ու եպիսկոպոսաց կողմանէ, նոյն ժողովի մասին յայտնելով իրենց ծով ծախօթովիմբ:

Զիրենք լուսաւորեց կարնոյ ժողովը, որ յաջորդց այդ թղթակցութեան, և զոր կը յիշէ Յովհան Մամիկոնեան³, մինչ Սիրէոս կը լուէ Անոր մասին աւելի մանր կը խօսի Փոտ, զրկով այսպէս: «Եթէ Խորացելոյն Հերակլի կայսեր Պարսիկու ել ի կարնոյ քաղաք, և զեզր Կաթուղիկոս Հայոց և զրացմութիւն եպիսկոպոսաց Հայոց և այլ ևս բաղումը ի Ալսորոց ի մի վայր զումարեալ, խոյր և նոնդիր արաբեալ երեանօրեայ մամանակօց, զարձեալ հաւանեցան Հայոց կամաւ՝ և ոչ բանութեամբ, և ընկալան զժողովն Քաղկեդոնի ձեռագրով», մինչ Յոհան մայրագոմեցին այս կողմէ անոնց դէմ կը յուզէր հայ ժողովուրդը⁴: Սիրէոս ընդ Հակառակն կը պատմէ՝ թէ Եզր Ասորոց կողմերը զնաց՝ կայսեր, որ զիտենք թէ 632ին Դամասկոսի մէջ նստած էր, «և հաղորդեցաւ ընդ նմա օրինօց». յիսոյ պարգև ներով ու շըով զերազարձաւ, և ընակութիւնը հաստատեց «ի մէջ բանակին Յունաց»: ապացոյց թէ կը վախէր մոլեռանդ ազգայնոց ոմանց զրէմինորութենէն: Միր միջին զարն ալ մըմոաց անոր դէմ՝ իրքն ազիսարար խարեալի մը, իսկ Տէք Սիրեւեան նրամատութիւնն ունեցաւ Հակաբաղկեդոն ցուցնելու զինքը, որպէս թէ կը միարանի կայսեր թղթին վրայ, «յորում Քաղկեդոնի անունը չէ եղել», և մացած

բովանդակութեամբ համաձայն էր հայ դաւանութեան: Բանասէրդ հիմնեցաւ Մաթուսաղայի թղթին վրայ⁵, որ ճիշտ ասոր հակառակ վկայեց վերև, և զոր յայտնի է թէ Տէք Սիրեւեան չէր հասկցած, կարուոյն ժողովին մասնակցողն մասնակցուած էր անկասկած, և գործեց իւր խոնին և ազգին բարոյական շահերուած համեմատ:

Յ. Իրեն յաջորդեց Ներսէս Շինող (641-661), ի մանկութենէ Յունաց քով սած, անոնց լեզուին ու պարութեան տիրացած, յետոյ զինուրորսուրն ալ բոներ էր կայսերական բանակին մէջ, իւր պարթեան անուանակցին երկրորդ պատկերը, Երբ և ինչպէս իւր լոդիկը փոխեց պճղուարը պարզօտին, յայտնի չէ, կիրիոնի պէս մոտէն և աղրիցքն ծանօթացած քաղկեդոնեան վարդապետութեան, չէր կը նար չմեծարել զայն: «և ոչ ումեց ի վեր հանէր զիսորհուրդս ամբարշութեանն՝ մինչև հաւան յինքիսկոպոսութիւն աշխարհն, և անատի կոչեցաւ յաթոռու կաթողիկոսութեան», կ'ըսէ Սիրէոս, զայն խոստովանելով հանչերձ «այր առացինի վարուց, պահօց և աղօթիւց» ու «ըրիստոսասէց»⁶, և չըմբռնելով ներքին կապը՝ որ կար այդ առաջ հինութեան ու կարծեցեալ «ամբարշութեան» մէջ: Ներսէս անբաւական իւր համոզմամբ, «ի նորդէր հաւանեցուցանել զայր՝ Քաղկեդոնի ժողովյն, բայց ի վեր հանել զրանք ոչ համարձակէր»: Եւ ինը զինքը տուաւ պայծառացնելու իւր հօտը՝ բարեկարգական կանոններով ու կառուցմամբ սրբազան շինուածոց:

Այդ շրջանին Հայաստանի մէջ էր կայսերական զօրագունդ մը, զօրավարութեամբ Թէկողորու Խշտունոյ: Ծնանելով Պոյները՝ որ Հայր հների կը բռնէին զինքին անուածութեամբ ու կառուցմամբ:

1. Սեր. 159. — 2. Օրբել. 87. — 3. Մամիկ. 48. — 4. Փոտ առ Զայ: — 5. Սեր. 158-59. — 6.

Տէք Սիրեւե. 123-24, 127-28. — 7. Սեր. 187. — 8. Կոյն 220.

կեղոն, կոստանդ թ կայսեր ականջը հաւատոցին, և նա պատրիարքին հետ միաբան՝ հրաման դրկեց քննել ու ջանալ «միաբանութիւն հաւատոյ» կատարել: 649ին՝ Դունիք մէջ հաւագուցան Հայոց եպիսկոպոսունց և իշխաններ՝ կաթողիկոսին ու զօրավարին քով. իսկ Յունաց կողմէն ներկայ էր հայազգին Դաւիթ փիլիսոփայ: Զհաւանցան Հայը, և միատական երկար նամակ մը գրեցին կայսեր, սովորական անդիմակից յարձակմամբ Քաղկեդոնի դէմ: կան նոն նաև յարմար ու անյարմար կը տորենիք, որոնց յատամուտ կը թուրին կաթողիկոսն ակամայ հետեւցաւ բազմութեան, սպասելով որ իւր զործելու կարգ գր գար:

653ին թէսդորոս և հայ իշխանց փոփոխամտութեամբ ապստամբեցան կայսերին ու միացան արարական նորեկ իշխանութեան հետ կոստանդ չամանդ չհանդուրժեց այդ դակին, և 10000ով ցալեց Հայաստանի վրայ՝ պատժելու համար: Երբ հասաւ ի կարին, ընդ առաջ գնացին բազմութիւն մ'իշխանաց ու հայրապետը, և ողոքեցին անոր ցասումը: Կայսրը 20000ով անցաւ ի Դունիք, և հիւրենկալուցաւ ի տան կաթողիկոսին: Ներսիս մամր հասած էր՝ թէ՛ շահելու կայսրը և թէ իւր խոճին ասպարէզ տալու բացաւ Ա. Գրիգորի գններն անոր առջև, հոռով երէց մը պատարացեց, Քաղկեդոնի ժողովը քարոզուեցաւ կաթողիկէին մէջ, «և հաղորդեցաւ, կ'ըսէ Սերէոս, թագաւորն և կաթողիկոսն և ամէն եպիսկոպոսունքն, որ կամաւ և որ ակամայ», բաց ի միոյն՝ որ ծածկապէս խոյս տոււաւ: Պատմիչը կը արանջէ հոս, բայց ինքն իսկ ըսաւ թէ հայ եպիսկոպոսաց մէկ մասը կամա հաղորդակցեցաւ. ապացոյց՝ թէ հակացադիկոննեանց մէջ ալ գեն կային ներսիս նման խորհու եպիսկոպոսներ. «մանաւանդ զի մեռեալ էին երանելիքն՝ որը էին հիմնաւորագոյնց», այսինքն բաժանման ժամանակի ջերմերը, և մեացեր թոյլատուններ:

Հայրապետին մտերմութիւնը կոստանդի հետ սաստիկ զայրացուց ապստամբ

իշխանները, որոցմէ ստիպուեցաւ խոյս տալ Ներսէս, կայսեր հետ զնաց ի կոստանդնուպոլիս, պատուեցաւ ու զարձաւ «զաղարեաց ի Տայս, և այլ ոչ զարձաւ ի տեղի իւր», մինչև որ մեռաւ Խշտոնին. և յետ վեցամեայ բացակայութեան անցաւ իւր աթոռը, և շարունակեց պաշտօնն ու շինարար գործը, կառուցանելով Ջըւարթնոց նշանաւոր եկեղեցն՝:

Այս մեր գիտացան է: իսկ ըստ Տէր Միքելանի՝ «կոնստանտինոպոլիսական չէր»: և կ'երեք՝ թէ զինքը բաղկեդոնիկ ընելու համար՝ իւր ներկայութեան «քարոզեցաւ ժողովն Քաղկեդոնի» Գունի նկեղցոյն մէջ, նաև Ներսէս թթու միարբնակ մ'էր ըստ իրեն, և թէ «կայսրը Հայոց եկեղեցում հաղորդուեցաւ, և ոչ թէ կաթողիկոսը Հոռոմոց եկեղեցում»: Բայց արդեօս յոյն պատարագին ալ հայապաւան մ'էր: Եւ վերջապէն՝ կայսրը լսելով ներսիսի վերոյիշեալ հակացադիկեղոն ժողովի մասին, և «զատացեալ զնենքութիւն նորա», կը յանդիմանէ զայն՝ բատնոյն գիտնականին, մինչ Սերէոս զայդ կը պատմէ հաղորդութենէ փախչող եպիսկոպոսին համարուն: Եթէ ըստ իրեն կայսրն ու կաթողիկոս հակառակ էին Քաղկեդոնի, ինչո՞ւ ներսիսի հակացադիկեղոն ժողովը նննոցութիւն համարուէր ու յանդիմանէր: Սերէոս կը պատմէ ևս՝ թէ ներսէս «մատնէր զմի մի յեպիսկոպոսացն և բեկանէր անհւ, մինչ զի առ մահուն երկուզի ամններեան զրամանան կատարէն»: Թէպէտ բանութիւնդ շհամաձայնի անոր առացինութեան հետ և կասկածելի թուի: Ծնչ պէտք կար սակայն հակացադիկեղոն հայրապետի՝ հակացադիկեղոն եպիսկոպոսները ստիպելու՝ հակացադիկեղոն կայսեր հետ հայրորդուիլ: Աչ, Տէր Միքելանին անարուեստ կամակորոզ մ'էր, և կարդացածին հետ ըսածն ալ չէր հասկնար:

4. Եինողի երեց յաշորդաց մասին

1. Աւք. 223. — 2. Նոյն՝ 187-211. — 3. Նոյն՝ 215, 217-21. — 4. Նոյն՝ 224, 235. — 5. Տէր Միքել. 184-95. — 6. Աւք. 221.

ժամանակակից տեղեկատուներ կը պահ-սին։ Անոնց առաջինն Անսատաս սենեկաբն կ'ըսուի նախորդին։ Եւ որովհետեւ սենեկապանը զաղափարակից մարդիկ կը լինին իրենց պետերուն, ներելի է զի՞նաստաս գաւանակից կարծել կանխաւ Ներսիսի, և նոյնպէս ալ մասցած հայրապետական աթոռին վրայ իւր յաջորդին իսրայելի նկատմամբ ոչինչ զիտենք։

Խնդիրը կը փոխուի Սահակ ձորափորեցոյ մասին (677-703), կախաւ եպիսկոպոս թուտակաց, իւր օրով հայ նախարարը նախ ապստամբ Յոյներէն, յետոյ կը զաշնակցին անոնց ու կը կոտուի դաւաճանող Արքարաց զէմ, զօրավորութեամբ Մարտայ, որուն կայսրը կիւրապաղատութեան պատին ալ կու տայ՝ 691 թուկն։ Ասոդիկ աւելի մանրամասն կը պատմէ։ Յուստինիանոս թ իւր չորրորդ տարւոյն (689) բանակով մը կու զայ ի Հայո, որոնց կը հնագանդին. և կայսրը Հայ նախարարներէն իշխաններ կը կարգէ, և պատանդներ կը տանի հետո, որոց մէջ կան Սահակ կթզ. և հինգ եպիսկոպուներ՝ Երեք տարի վերջ (692) կատարուեցաւ կոստանդնուպոլսի Տրուղեան կոչուած ժողովը, որ բարեկարգական կանոններ սահմանեց, և որոցմէ ոմանց կը վերաբերին Հայոց ծիսական իներոց։ Բնական է հարցնել՝ թէ յոյն ժողովի ինչպէս սահմաններ կու տար իրենցմէ անջատ և անլող Հայութեան. բան մը՝ զոր ուրիշ ժողովներ չինորհեցան բնաւ ընել։ Ու կը տարուին հետևենելու՝ թէ այդ պահուն Հայոց և Յուստին մէջ որ և է համաձայնութիւն. մը լինելու է, ինչ որ խկապէս ալ կը հաստատէ յոյն գաւազանագիրը, զրելով՝ թէ Յուստինիանոս զՍահակ և անոր հպատակ եպիսկոպոսները կոստանդնուպոլսի մէջ «ի հաւաքեաց, և ետ խոստովանել զերկուս օնութիւնս Քրիստոսի և Աստուծոյ մերոյ՝

զատուուածային՝ և զմարդկային՝ ի միում ինցնութեան, անշփոթ՝ անբաժանելիս, վասն որոյ և հաւաստեաւ զրոյ երդուան, զի մի՛ երբեք լիցի նոցա յուրաստ կալ։ Բայց երբ վերադարձան, կ'ըսէ, իրենց դիմաց գտան նեղութիւն, ազմուկ, խընդիրներ ու սպառնալից մերուուելու իրենց վիճակներէն, եթէ չնզովէին Հոռոմները։ Ըսկ նոցա ընտրեալ զֆառս մարդկան բան զԱստուծոյ, նզովս կարգացին նախ անձանց, և ապա որոց հաղորդեցին ընդ Հոռոմնն. և կացին մասցին անբուժելիք ի չարն։ Զի պատմեն՝ թէ բաղկեղունութեան յարած կաթողիկոսն ինչ դիրք ըըռնեց, Բայց ակներև է, և Սակու ժողովոց բազմախիսալ զրութիւնն ալ հեռի չէր ճշշմարտութենէ, Եզրէն մինչ Եղիսա բոլոր կաթողիկոսները բաղկեղունիկ համարելով՝ ի հեռուկս կարծեցնեալ և զիւրին հերցում ներու։

Հին կանոնագրեցրէն ումանց ունին «կանոնը սուբր ժողովոյն թէօդուպուլմի» կամ կարնոյ, գումարուած «հրամանաւ թագաւորին Սատրիանեայ», բազմաթիւ յոյն, հայ, վրացի և աղուաւ եպիսկոպուներէ, «հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ», սունց զանազան աղանդոց հետ կը հերցեն նաև «գումարան Լկոնի»։ Եւ միանգամայն խատիւ կը սահմանն ինունդն ու Տեառնընգառաջն ժստ հայ սովորութեան, և պատարազը բազարջով։ Եւ կայսրն ու Յոյները Հայս որսալ ջանալու պահուն իրենց կ'որսացուին՝ այդ կանոնները կերտողին ինելապատակին մէջ, շարունակելով սակայն կոռուլ իրենց հաւանած այդ հայկական սովորութեանց դէմ, ինչպէս ցոյց կու տայ պատմութիւնը Յոյն գաւազանագրին յիշած համաձայնութեան ինեղաթիւրեալ ձեն է այս, — հնարուած ոչ կանուխ քան զժի գար, ինչպէս կ'երմի եկեղեցական զգեստոց նկարագրէն անոր մէջ, — և զոր միամտու-

1. Յ. կթ. 115. — 2. Ղ. Առաջ, 17, 19, 28-28.
— 3. Առաջ, 101. — 4. Կոյն 100-101. — 5. կան.
Ա. Ա. Առ, 28. — 6. Comb. 287. — 7. Գր. բարոյ,

922. — 8. Օրման. Առաջ. 815. — 9. Գրչ. թ. 1171
Ա. Ղ. Ա.

բ'ն ընդունեցան Տէր Միքելեան¹ և Օրմանեան, սա հաստատուելով Գր. Ցաթեւացոյ անագան Վկայութեան վրայ²:

5. Յարդ տեղող բաղկեդոնիկ համոզական կամ ստիպողական հոսանքին գիմպատուար մը կանգնեցաւ Եղիայի հայրապետութիւնը (703-717). Ասոր զործը զիսաւորապէս Աղուանից Բակուր կաթողիկոսին հետ էր: Նոյն ազգին բաժանումը, զոր յիշեցինք³, կը տեէ 28 տարի, և կը վերջանայ Կոմիտասայ երրորդ տարւոյն՝ բատ Ան. Մոկացւոյն⁴: Կաղանկատուացոյն կը յիշէ մեր Անսատաս Կաթողիկոսի մտերմութիւնն իրենց Զուանշիր իշխանին հետ⁵, որ կրնայ նպաստել Մոկացւոյն տեղեկութեան, Կաղանկատուացոյն շարունակողէն, — ուսկից առաւ և Ցովհաննէն կթզ. — Կ'իմանանց՝ որ Ներսէս Բակուր ի բնէ բաղկեդոնական, զինց ընտրող ժողովին պահանջման վրայ Փաղկեդոնի հակառակ ձեսնարկ մը կու տայ: Եթոյս սակայն իւր սեպհական զրոշը կը պարզէ, ունենալով իրեն կուսակիցներ, ինչպէս և հակառակորդներ՝ որոնց Եղիայի կը բողոքին: Եւ նա Արդմելէց արար իշխանին յեցած, Կ'երթայ Պարտաւայ մէջ հաւատացննական ատեան մը կը կազմէ, ու հարուածներով և անսուաղութեամբ կը մահացնէ զայն: անոր յաջորդ կ'ընտրուի Սիմէռն, և հաշուութիւն կը կննուի Հայոց և Աղուանից մէջ⁶:

6. Տարրեր համոզման կը ծառայէ իւր յաջորդը Յովհաննէն օճնեցի իմաստասէրը: Աշակերտած ու սերտիւ փարած էր՝ նաև յետ հայրապետութեան՝ Թէողորոս Փոթենաւորի յիշատակին⁷, որ եթէ ստուգիւ քեռորդի էր բաղկեդոնիկ Եղիր⁸, Կ'արդարանայ իւր յունադաւանութեան համարաւոր⁹: Ասոր ուսման ու համոզման հետեւող մ'էր ուրեմն իմաստասէրը, որոյ Վկայ է Ընդդէմ երևուականաց ճառը, զոր

իր պաշտպան քաղկեդոնեան դաւանութեան՝ կը մեծարէր կիլիկիոյ հայրապետական աթոռը, ինչպէս յայտնի է Գր. Վկայասիրի յիշատակարանէն, զոր հակառակուրդ գրչագրող մը չէ մարսելու և եղծեր է մասամբ¹⁰: Օճնեցին զգուշացեր է յիշել ճառիդ մէջ Քաղկեդոնի անունը, որ բաւական էր ապարդին դարձնելու իւր խօսքը: Բայց լուութիւնդ ինքնին, փոխանակ թշնամանելու զայն, առանց որոյ ոչ մէկ հակաբագկեդոն գրիչ խօսած է երբեք ըընութեանց խնդրոյն մասին, յայտնի ապացոյց է իւր բաղկեդոնականութեան: Լուց անունը, սակայն ջատագովից անոր վարդապետութիւնը, ոչ միայն ըստ իմաստին, այլ և ըստ տառին: Որովհետև շատ պայքարի նիւթ եղած է ճառդ, կը բաղեմ հոս անոր կարեւորագոյն կէտերէն զոմանս:

կը կոչէ ս. Հարց խօսքերը. «Անպատկառացոյցց սուրբ հարցն երկուոց թնուրեանց Քրիստոսի աստուածայնոյն և մարդկայնոյն լիեալթ, (այսինքն կրկին բնութիւնները համարձակ ցոյց տուին): Բնուրինք երկու ասելով, վասն զի Աստուած և մարդ¹¹. և եթէ՝ ի միասին եկին թնութիւնցն. և եթէ՝ Հաւասարի գերկոսին ուներ քննութիւններ Քրիստոսու¹²: և եթէ՝ կրկին և Քրիստոս, մարդ էր որ երկու, և Աստուած էր որ ոչն երւէր¹³: Եթոյս ակնարկելով կիւրզի «մի թնութեան» կ'ըսէ. «Զմին ասել թնութիւն՝ եթէ որպէս պարտն է ասել ըստ նշմարտութեան կարգի՝ ոչ ասիցէց», հայնոյիշ պիտի լինից: ուր երկդիմի կը գտնէ մի թնութիւն սահմանը: «Զի ոչ է մի թնութիւն մարմնոյն և Բանիկն ըստ նոյնութեան թնութեան, զի ոչ մարդկային երկոցին, և ոչ աստուածային... այլ զոր էրն՝ ոչ ի բաց թողլով, եղկ զոր ոչն էր¹⁴». այսինքն աստուածային թնութեան յարելով մարդկայինը, պահեցին իրենց զանազանութիւնը, որով և երկուութիւնը: «Արդ

1. Տեր Միքել. 187. — 2. Արք. 766-67. — 3. Գր. 291. — 4. Արք. 1897, 187. — 5. Կազմն. 156. — 6. Կաշան. 235-44. — 7. Օճ. 2. — 8. Զորք. Մատեն. Ա. 470. — 9. Օրբէ. 85. — 10. Օճ. 80.

— 11. Աստուածաբանին. Բամ. 327. — 12. Կոյն հօր նոյն բգթին. — 13. Կիւրզի երուա. — Օճ. 57. — 14. Կոյն 50.

յայտ է՝ թէ անհասանելի միաւորութիւնն՝ և ոչ բնութեանցն այլայլութիւն՝ առաջնորդեն մեզ զմին ասել բնուրին մարմարացաւ թանին¹։ այսինքն կիւրզեան մի բնուրիւնը չի նշանակեր զոյզ բնութեանց խանգարմամբ ձևութե ի մի, այլ անոնց միաւորութիւնը ։ կամ անձնաւորական մրութիւնը ըրով բանն և՛ բատ բնուրեան յերկոց՝ աստուածային և մարդկային. իսկ բատ միասորուրեան մինք։ կամ «կատարեալ բատ երկարանիրոցն զիտերով զերկուն», (կրկին բնութեանց իւրաքանչիւրը կատարեալ նկատելով), բատ միաւորութեան մի կատարեալ, մի դկմ և մի որդի կատուծոյ խոստովանելով²։ պարզ խօսցով՝ երկու բնութիւն և մի անձն Յուլիոս պապի վկայութիւնը կը կոչէ, և կը յարէ. «առ երկոսին հաւասարապէս ունի երանութեանը բան, երկախոսմբ խոստովանեալ բատ բնուրեանց, (երկու բնութիւն ունեցող), և մի բատ միասորուրեան», որ է անձնաւորապէս. և թէ ո. Հարց պայծառացան՝ «երկու բատ բնուրեան և մի բատ միասորուրեան զբրիստոս ցարողիով³։»

Յետոյ կը յարձակի անոնց գէմ՝ որ կը խորչէն «երկու բնութեին» բացատրութենչն, «Փախչիս ի բնութեանդ անուանէ, ընդ նմին և յերկոսց ասելոյ, և ոչ զիտեն՝ թէ մարմին ասելով՝ յերկոսին ի ենքրոց բախչիսէ»։ «Զմարմինն մարդին բանին ասելով, և զիանն ասացեալ մարմին ունել, զինչ այլ ինչ թուփիս ասել, եթէ ոչ կրկին։ Եւ գարձաւը՝ զիանն ի Հօրէ ասելով, զՀօրէ տացես նմա բնուրին. իսկ զմարմինն ի մարդկանէ ասելով՝ զոյզ ունել ասես նմա բնուրին, եթէ ոչ զմարդկան.. . բանզի նոյն է մարմին մարդկային ունել Քրիստոսի և բնութիւն մարդկային⁴։ ուրեմն երկու բնութիւն։ «Զմի բնութիւնդ ապացէն ընդէմ երկուս բնութիւնս ասողացն ասես զոլ։ Եւ որ երկոսն ասէ բնուրինս,

զաստուածայինն ասէ և զմարդկայինն, դու զով ոց ի նոցանէ ասեն՝ զմիդ ասելով, կամ ըստ որո՞ւմ յեղանակի⁵։ Անտեղի կը գտնէ երկու բնուրեանց դէմ զործածուած մի բնուրիւնը. մինչ ընդ հակառակն յերկուց բնուրեանց խոստովանելով, նշանակեսցիս զնա մարդ միանգամայն և Աստուած⁶։ իւ այսպէս ամրող ճառը լի է երկու բնութեանց գաղափարով ու ձեռվ, և հոծ ո. Հարց վկայութեամբը, աւելի սաստիկ պնդելով՝ բան զոր Քաղկեդոնի ժողովը թողուց գրով։

Ասոր հետ նաև զիտելի է՝ որ իմաստասիրին յիշած ու հարուածած այդ երևորականը՝ օտար կամ յայտնի աղանդաւորներ չէին. այլ իրեն մերձաւորներ, որոնք մարդեղութեան շուրջ իրենց տեսութիւններով՝ կը թուէին «առ աչս երեսութեան կարծիս արկանել մարմացելոյ բանին, որքան ի զօրութենէ բանից նոցա ի միտ առնուլ է, վանզի զամենայնն ի Քրիստոս ըստ մարմայն կիրս՝ ոչ առնուն յանձնն ասել բատ մարմեն և կամ մարմել, զի մի երկուց՝ ասեն՝ ակնարկութիւն տայցեմբ բնութեանց ի մին Քրիստոս՝»։ Երկու բնութեանց մեր սովորական հակառակորդաց գէմ էր ուրեմն ճառդ, ոչ ծանուցեալ երեսութականաց. և իրը այսպիսի կը ճակատեցնէր զայն Գր. Տղայ կաթողիկոսը հազբատացւոց և հրաւիսայնոց գէմ, և Լամբրոնացին կը մատնանշէր՝ Եղիքի հետ՝ Հռոմելայի ժողովին առջեւ, որ նոյն ճառն առաւ Մանուէլ կայսեր դրկեց՝ Եւ Խորհիլ՝ որ մեր օրով երկու համալսարանական բանասէրներ, Տէր Միքրեան⁷ և Տէր Մկրտչեան⁸, այս ճառը Քաղկեդոնի զէմ զրուած համարեցան։ Աղոնց գատողութիւնը մեր հասողութենէն վեր էր բնականապէս։

Ի հասաւատութիւն Օձնեցւոյն միարնակութեան՝ Տէր Մկրտչեան բանասէր անոր, անունը կրող ուրիշ զրուած մը՝

1. Օճ. 51. — 2. Նոյն՝ 54-55. — 3. Նոյն՝ 52, 57. — 4. Նոյն՝ 52-53. — 5. Նոյն՝ 55. — 6. Նոյն՝ 57. — 7. Նոյն՝ 48-49. — 8. Լճ. բդ. 80, 76,

168. — 9. Նոյն. բեդ. 191. — 10. Տեր Միքր. 189-142. — 11. Արք. 1896, 160. — 12. Ալու անոր կրող ուրիշ զրուած մը՝

«Ընդդէմ դաւանողաց զմի Քըրիստոս յերկուս բնութիւնս», նախորդին հակասնեայ մը զաղափարով և ոճով, յորում կը ճակասի Քաղկեդոնի և Լևոնի դէմ: Թուղթ մ'է առ Յոյնս, զոր ըստ յարակից ծանօթութեան մը՝ Ն. Լամբրոնացին Գր. Տըղայի և Լևոն արքայի հրամանակ ի կոստանդնոլպիի կը տանի¹: Երեք քաղկեդոնիներդ կը պարձին ու կը ծառայեն այդ հակաբաղկեդոն շարադրութեան: առասպելաց առասպելը իւր վարդապետութեան հիմն է՝ թէ «անհնար է ապա ի միում դիմի երկուց բնութեանց գոյանաւ, և հարկ է երկաբանչիւրոցն բնութեանց երկուս դէմս միանգամայն շարադրասել»: և թէ «մի պարտ է խոստովանել բնութիւն զանախտակիր աստուածութեան և զախտակիր մարմոյն՝ որով մեռաւն գասն մեր»: Ուրիշ բացատրութեամբ՝ «երկացանչիւրոցն անփոփուելի բնութեանց ի մի բնութիւն շարադրեալ»: և կամ «յերկուոց բնուրեանց մի բնուրիմ բանին մարմացելոյն»: Զեսպ՝ եւտիքական դաւանութիւնն է², իսկ թէ իմաստով՝ հակասական և անսեղի: Եթէ երկու բնութիւնց անփոփոխելի էին, բնչպէս ուրեմն փոխուեցան և մէկի վերածուեցան: իսկ եթէ չփոխուեցան, ապա երկու մասցին: Թղթիդ հեղինակը բնուրեան իմաստով չէր հասկնար, և չէր կարող զատել անձնեն, որով անկարելի կը կարծէր երկու բնութիւնը մէկ անձի մէջ, և երկու բնութեան երկու անձ ալ կը պահանջէր, և ազով «չորրորդութիւն յերրորդութեանն փաստանութիւն մուծանել» կը համարէր³, զոր յետոյ պիտի մերժէ Շիրակուանի ժողովը: Գաղափարաց այդ խառնակութիւնը չէր կարող Ծնդդէմ երեւրականաց ճառը կերտող լուսաւոր մոցէն թղիսել, թէպէտն հրատարակիչը խորապէս համոզուած էր անոր գաւերականութեան⁴, և ժամանակաւ ինձ ուղղելով

խօսքը՝ կ'ըսէք: «Ալըգեօց պէտք է փորձէր նա ապացուանելու և ինչ հիմունքներով՝ թէ Օձնեցւոյն չէ այդ⁵: իսկ Օրմանեան զայշ «վաւերական ճանչցուած» ըստա⁶, զուցէ իմանալով հրատարակչն: Շատ բարեմիտ աեսութիւններ երկութղ ալ:

Միջնադարեան ուրիշ ցաւազար ստեղծուած մ'է «Սակա ժողովոց որ եղեն ի Հայք գրութիւնը՝ յանուն իմաստասիրին⁷, լի թունով ընդդէմ Քաղկեդոնի, զոր գերբեց Զամշեան¹⁰, և Օրմանեան¹¹ ու Տէր Մկրտչեան¹² նոյնպէս անվաւեր համարեցան: Շարադրուած է յետ Օձնեցւոյն և նախ քան զԱսողիկ, որ 1004ին կը ճանաչէր զայն իրը զործ Մանազգերարի ժողովոյն¹³: Լի է ստութեամբ ու մոլորութեամբ: Զոր օրինակ՝ կ'ուզէ որ Գր. Արշարունին իւր ճառերը զրած լինի հրամանաւ իմաստասիրին՝ հակառակ թունաց ու Քաղկեդոնին¹⁴: մինչ հեղինակը կ'իմացնէ՝ թէ շարադրեր է վահան կամսարականի խնդով, և զՈձնեցին չէ յիշեր բնաւ, - կ'ըսէ՝ թէ «կաթողիկոս յեղբէ նստեալց մինչ ցայժմ՝ նոյն խոստովանութեամբ Քաղկեդոնի վարեալ լինէին», անոնց մէջ խառնելով և ռուոն հակառակորդ՝ Եղիա¹⁵, որոյ համոզութեամբ ու զործը չէր կարող անփոխանակ իւր ժամանակակից ու յաջորդը՝ թէ, իմաստասէր: - կը յիշէ Մանազգերարի ժողովը՝ «ի խուռմն զանցոյն Քաղկեդոնի և Եղիա», ուր «կարգեցաց, կ'ըսէ, ճառարազամն հակառակ երկարնակացն Քաղկեդոնի» և այլն¹⁶: Սակայն Միջայէլ ասորւոյ ժամանակազրութեան հարազատ բնագիրը՝ որ լոյս տեսաւ, մեզ տուաւ նաև Մանազգերարի ժողովոյն վճռոց իսկական բնագիրը: ուր տեսնուեցաւ՝ որ ժողովը զումարուեր է Ասորւոց հետ, անոնց մէջ տարածուած յուլիսնեանց հակառակ, ու զրադեր Քրիստոսի մարմնոյն ապականու-

1. Արք. 1896, 199. — 2. Ալք. 195, 196. — 3. Ալք. 194, 196. — 4. Բար. 226. — 5. Արք. 195. — 6. Ալք. 356, 361. — 7. Ալք. 162. — 8. Արք. 285. — 9. Գր. բարց. 220. — 10. Զամ.

թ. 576 և. — 11. Ալք. 842. — 12. Արք. 159. — 13. Ալք. 108. — 14. Գր. բարց. 232. — 15. Ալք. 228, 222. — 16. Ալք. 228, 224.

թեան կամ անապականութեան հարցով¹, և գործ չէ ունեցել քաղկեդոնեանց հետ: — կ'ըսէ՛ թէ թանն «ընկդմեաց զմերային», խառնեաց յիշը ասուածութիւնն», ուր շեղագրածն եւտիբականութիւնն է: Եւ թէ «իմառնեալ... անմեռն ընդ մեռուս և արտարեալ զմեռուս անելնեա»², մինչ Մանազկերտի ժողովը կը նեղովէ զայն՝ «որ ոչ խոսապանեսցի՛ թէ ճշմարիտ մարմինն Քրիստոսի ըստ բնութեան չաշշարելի և մանկանցու թիշէ»³:

Հուսկ զիտել կու տամ՝ որ Յովհաննէս պատմապիրն ալ անտեղեակ էր Ոճնեցւոյն որ և է հակաբազկեդոն զործոց կամ զրուածոց⁴: Ինչ որ իրաւունք կու տայ խորհելու՛ թէ այդ կեղծիցները զետ չկային իւր օրով (924ին): Եւ այսպէս իմաստասէրը կը մնայ մեր պատմութեան մէջ մեծագոյն ու հօրագոյն պաշտպանը քաղկեդոնեան վարդապետութեան, «որ սփեսուտ տարածեալ էր չեն բոլոր Հայք», կ'ըսէ Սակու ժողովոց⁵: և այս պարագայն իսկ կը վառէր հակառակորդներն այդպիսի կեղծիցներ ստեղծելու և կոռեւլու անոր գէմ:

7. Օճնեցւոյն յաշորդը Դաւիթ (728-741) հակառակ էր Քաղկեդոնի պացոյց՝ կոստանդնուպոլիսի Գերմանոս պատրիարքին հետ Թթվակցութիւնը⁶, զործակցութեամբ Առ. Ալենեցւոյ, որ գաղափարակից էր հայրապետին ըստ Գերմանոսի⁷, և նոյնպէս ճանչցուած նաև Լամբրոնացին⁸: որով տեղի չկար Զամշեանին չանցերուն՝ խանգարուած ներկայացնելու Ոճնեցւոյն զրածը, և զինքը ցաղկեդոնական կարծելու⁹: Յետոյ կու զան երկու Տրդատներ (741-767), որոց կրօնական համոզման մասին ոչինչ զիտենք:

Առողջ յաշորդը Արոն (767-775), յառաջ եպիսկոպոս Աղճնեաց, Աղուանից աթոռին մէջ ի Պարտու գումարեց խառն ժողով մը, ուր զրին բարեկարգական կառնաներ, առանց յուղեալ կրօնական խամոզման մասին ոչինչ զիտենք:

Դիրը: Կ'երենի՛ թէ Արոն սրբութեան հետ¹⁰ հանգարսարարոյ մարդ էր, որով խաղաղ թողոց նաև զբաղկեդոն և անոր հետեւողները: Արգիլեց ամուսնութիւնն «ընդ հիթանոսի¹¹», բայց ոչ քաղկեդոնականաց հետ, ինչպէս Արքահամու մոլեւանդութիւնն ըրած էր¹²: Հոս մտքերու անզորութիւնն մը կը տիրէ, որ կը շարունակէ նաև հետազայ ութ կաթողիկոսաց օրով, որ են խայիր, Ստեփանոս Ա, Յովար, Աղոյոմն, Գերոգ Ա, Յովաչի Բ, Դաւիթ Բ և Յովհաննէս Ավայեցի (770-855), և որոց մասին նոյնպէս լուութիւնն է պատմշաց կողմանէ, և ոչ մէկ հակաբազկեդոն զիր կամ յիշատակարան թողած են իւենք:

8. Զարարիայի ժամանակ (855-877) ծայր տուաւ յունական հերձուածը: Թէուգորա կայսերուելոյն եղրայը Բարդա՝ յափշտակեց քեռորդոյն Միքայելի զահը: Խայտանակ անբարոյութեամբ լեցուց արցունիցը: արձակեց կինը և կը կենակցէր նուին հետ: Խնդատիոս պատրիարքը, անաշառ ու խստակրօն մարդ, բողոքեց, և յայտնութեան օր մը ս, հազորութիւնն զրկեց զայն, որ ի վրէժինդորութիւնն ացսորեց հայրապետը, և անոր տեղը ձեռնազել տուաւ իւր ցարուուզարն ու թիկնապահապետը Փոտ (857), զիտուն՝ փառասէր ու խորամանկ մարդ մը: Երկուցն ալ կեղծաւոր նամակներով իմացուցինն եղելութիւնը նիկողոս Ա պապին, որ ամէն բանի տեղեկանալով՝ միջոցներ ձեռոց առաջնատիոսի իրաւանց պաշտպանութեան համար, և աթոռնկէց հոչակց զփոտ, որ չուզեց հնազմնդիլ, ու բանադրուեցաւ Հոոմէն (864): Անոր գոռուցութեան ուրիշ ելք չեր Պար, բայց ապրստամբիլ Պետրոսի աթոռէն, որոյ հետ մինչև այդ ժամանակ մրացեալ էին Յոյները, և ներեսիկոս հոչակելով բոլոր արևմտեալյացը, և առ այդ տալով բարուրներ՝

1. Տէր Մինս. 179 և. — 2. Գր. բորց, 225, 227. — 3. Տէր Մինս. 201. — 4. Յ. Կր. 128-29. — 5. Գր. բորց, 281. — 6. Գր. բորց, 358, 373. — 7.

Անգ. 360-61. — 8. Լոր. թոր. 150. — 9. Զամէ. Բ. 555. — 10. Յ. Կր. 135-36. — 11. Կանոն ժամանակութիւն (864): Անոր գոռուցութեան ուրիշ ելք չեր Պար, բայց ապրստամբիլ Պետրոսի աթոռէն, որոյ հետ մինչև այդ ժամանակ մրացեալ էին Յոյները, և ներեսիկոս հոչակելով բոլոր արևմտեալյացը, և առ այդ տալով բարուրներ՝

որոնք օր մը մեծ հանցյը պիտի պատճառէին Օրմաննեանի¹, թաջորդ կայսրը թարսեղ, որ Փոտէն բոլորովին տարրեր կը խորհէր, տապալեց զայն (867), որի նաւոր պատրիարքն աթոռը զարձուց, և հաշտութիւն իննըցեց Հռովմայ հատ. որոյ համար կատարուեցաւ ութերորդ տիեզ. ժողովը կոստանդնուպոլիսի մէջ (869-870), և ապստամին արսորուեցաւ իւր յամառ համախոհից հետ: Ուժ տարի գերջ (878) վախճաննեցաւ իջնատիոս. և յափշտակիչը կեղծաւորաբար սպրցեցաւ աթոռին վայու, շարունակեց իւր նախկին ընթացքը, և զարձեալ բանաջրուեցաւ Հռովմէն, կրկին աթոռազորկ եղաւ Լևոն կայսեր ձեռորվ (886), և հայ վանցի մը մէջ բանտարկուած՝ կնքեց փոթորկալից կեանքը, մինչ իւր սերմանած հերծուածը 1054ին պիտի նորոգուէր կերիւլարիոսի ձեռորվ ու բաժնէր իսպատ յոյն եկեղեցին հռոմէականէն²:

Փոտ իւր պատրիարքութեան առաջին շըջանին ջանքեր ըրաւ Հայոց հետ միութեան, յօգուտ ոչ այնքան մեզ՝ որչափ իւր աթոռին ու կայսերութեան՝: Առ Աշոտ իշխան թուղթ մ'ունի, յորում կ'ըսէ՝ թէ այս մասին «բազում անգամ զրեցար յառաջնորդդ ձեր և բահանայապետդ յոլովակի բանիւր՝»: Բայց այս և առ Զարարիի մէկ թուղթը միայն մնացած է հայերէն լեզուով, ուսկից երոպացից ալ թարգմանեցնէ: Աշոտ մեզմէ՛ բայց ժիտողական պատասխան մը զրեց՝ Սահակ Ապիկուրէշ վարդապետի շարադրութեամբ:

Աւելի դիւրանսաց հանդիսացաւ Զարարիս իւր Կորսուած Թղթին մէջ, որոյ բովանդակութիւնը Փոտի պատասխանէն զիտենց: Քանզի եղոնի ժողովոյն մասին զրեց է՝ թէ «եկեղակարծութիւն և երկրայութիւն բնուրեանց, և ի մի անձն և ի տեսակ միացեալ շարամանեալ և խառնեալ անշփոթարար»: Միանգամայն չորրորդութեան զազափարը զոր տեսանք³, կը հերցէ այսպէս. «Վասն որոյ որք ասեն՝ եթէ երկու բնութեան ասողըն զերորդութիւնն չորրորդութիւն առնեն, հայույննեն. նախ՝ զի զրպարտեն գուորք հարսն՝ որք բազում անզամ ասացին զերկու բնուրեան, որպէս Աթանաս, աստուած արանն Գրիգոր և այլք. և երկրորդ՝ զի ցուցանեն թէ ինքնանը երեց բնութիւն ասեն զսուրք Երրորդութիւնն, վասն որոյ մարմնով չորս համարին»:

Կ'երկնի թէ բոլոր ժողովականը չկա-

1. Ա. Ա. 97. — 2. Հմա. Goschler, XVIII, 241-246. IV, 181. — 3. Հմա. Գր. բղոց, 281, 298. — 4. Ա. Ա. 281. — 5. P. G. 102, է 698 ևս. — 6. Գր. բղոց, 258. — 7. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

կրկին օրինակաց, և Զամշեանի «Ժամացածին ենթագրութիւնը» չէ ըստ Օրմաննեանի (Ա. Ա. 975), որ Կերեր Փոխէ. — 8. Բազ. 326.

բողացան համոզուիլ «Քաղկեդոնի ուղղա-
փառութեան»: Եւ որպէս զի զամէնըը հա-
ճէին, այս տարօրինակ պայմանը զրին.
Եթէ որ «զբաղկեդոնի սուրբ ժողով» և
անոր հետեւող հինգերորդ ու վեցերորդ
տիեզերականները համաձայն զիտէ ս. Գը-
րոց ու նախկին ժողովոց, և «յանդինիցի
նզովել կամ զրպարտել ընդ պդոյն նես-
տորի համաձայնեալ, այնպիսին նզովեալ
եղիցի»: Իսկ ով որ նոյն ժողովը հակա-
ռակ զիտէ նախորդաց, և «վասն մարդա-
հանութեան և կամ վասն ընչասիրութեան
զնա ոչ նզովէ, նզովեալ եղիցի»: Այս
ամէնը կը կարդանք Ենիքակուանի ժողովին
արձանագրութեանց մէջ¹: Եւ Տէր Միքե-
լիան՝ որ մէկ զունով ներկեց մեր բոլոր
հայրապետները, և իրեն հետ երպացի-
ներէն զոման ալ թիւրեցուց յաճախ, Զա-
քարիայի դործոց վրայէն թոշելով անցաւ:

9. Անոր յաջորդ Գէորգ Բ գառնեցից
(878-897) հակացաղկեդոն էր: Մարե-
նցաց ուխտին հայրը Մաշտոց, յետոյ
կաթողիկոս, նամակ մ'ունի առ Արած
սպարապետ, յորում կ'ամբաստանէ ինք
զինքը՝ թէ «վրիպեցայ, և ըստ արտօղի պահ
անկեալ՝ ինքնանհրաման բարձի վլստրոց
սուրբ հարցն՝ որ ի մէջ մեր և քաղկեդոն,
նականացն», որոյ համար կը նզովուի
Գէորգէ և յետս կոչում կ'ընէ²: Յօթն
ամիս միայն տեղ այս ծերունի վանա-
կանին հայրապետութիւնը, ներցին համոզ-
մամբ քաղկեդոնիկ և արտացուած հակա-
ռակ, և տեղն անցաւ Յովհաննէս դրասի-
կերացին (899-931), Զերմ հակացաղ-
կեդոն մը, ինչպէս յայտնի է իւր շարա-
դրած պատմութիւննէն: Ոզգին և իւր կրած
տառապաններն Արարաց ձեռքէն՝ յետոյ
ամորեցին զինքը. Կարոստացաւ ու դիմեց
թիւզանդիսնի օգնութեան՝ զողոմիշ նամա-
կով մը, յորում կը քաղձայ «Հանդիպման
աստուածակարգ թագաւորացդ, և անձուկ
յոյժ ունիմ, կ'ըսէ, ի քաղում ամաց գալ
առ ձեզ»: Բայց ապա կ'ակնածէ անձամբ

1. $q_{F_1} \cdot p \cdot 764 + 320$ U. $q_{F_1} = 2 \cdot 84 \cdot 4p_2$.
188-89. — 3. $5 \cdot q_1 \cdot 852 \cdot 857$.

երթալ կայսեր հրավիրին, «զմտաւ ածեալ՝ թէ գուցք գտցի ող և ընդ ակամիք հայեցի, զանդ երթալն իմ ի քաղկեդոնիւսն յարակցել ինձ համարեալ»։ Յաջորդաց՝ Ստեփանոսի, Թէկոդորոսի ու Եղիշէի կրօնական քաղաքականութեան մասին կը լուէ իրենց մերձաւորագոյն պատմիչն Ասովկի, աղով իսկ հաստատելով անոնց խաղաղաւոր գարշութիւնը, որով այդ շրջանին (931-943) քաղկեդոնական հոսանքը կը զօրանայ Հայոց մէջ։

(Շարութակելի)

Հ. Վ. Հաջործի

Պ. Հ Բ. Ա Ճ Ա Ռ Ե Ա Ն Ի Մ Է Կ Ն Ո Ր Ս Խ Ա Լ Ը

Ալրամատական Բառարանին առաջին հատորը
(Ա, Բ), վերջապէս եւած է: Մատադր էնթր զայն
գրախօսականով մ'ողջունելու, սակայն զրին
վիմատիա վիճակը՝ ընթերցումը յոյժ գժապարին
և յոնհեցոցին կը գաբանէ, որով մեր ըարի
տրամադրութիւնն ալ՝ առ այժմ բոլորովին կը
միզկանար, մինչև որ աւելի գեղեցիկ և ըն-
թենութիւն, գուցէ և աւելի սրբազնուած սպազմու-
թեամբ մը լցու տեսնէ. քանի որ բանի մը գո-
վեստը կամ պարստա՝ անպայման անոր ծանօ-
թութիւնը կը պահանջէ:

Զայտ թղթատելով՝ տեսայ որ հեղինակը միայն
արմատներով է որ կը զբաղի, հապա երբեմն
կը ջանայ նաև քերականական վիճուներ ևս տալ:
Եւ ահա ասոր մէջ է որ ինձ համարձակութիւն
կու տայ դիմուղութիւն մ'ընելու:

Աստուած բարին նկատմամբ զրած յօդուա-
ծին մէջ (էջ Ե71-81), զիսելու երկու կէտ կը
գտննեմ. Նախ՝ տուած սուսեաբանութեան մա-
սին, և երկրորդ՝ անոր հոլովման։

Նկ4. Ասոի յայտնած պարզաբն կարծիքը, հայ բանասէրն իբրև ստոյգ կ'ընդգրիկէ, և կը գրէ թէ մեր Աստուած բառն յանչ կու զայ Փոխացաց Տեփելու կամ Տաթելու մն, բա-
ռնէն: Յունաստան բարի մեր Աստուած բառէն
Յունակութիւնը շատ յայտնի է. մէջը կը պակ-
սին: Ա և Տ գոներ, որք մեր յեօտին մէջ իրն-